ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Արձանագրել, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2016 թվականի հունվարի 26-ին ստորագրված վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Հարությունյանը սահմանված ժամկետում չի ապահովել ՀՀ սահմանադրական դատարանի 05.04.2016թ. ՍԴԱՈ-23 աշխատակարգային որոշման պատշաճ կատարումը:

2. ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից 2016 թվականի ապրիլի 20-ի դրությամբ ՀՀ սահմանադրական դատարանի պահանջած փաստաթղթերը չներկայացվելու դեպքում անդրադառնալ սույն գործի դատաքննության հետաձգման հարցին:

Ð²Ú²êî²ÜÆ Ð²Üð²äºîàôÂÚ²Ü
êÐØ²Ü²¸ð²Î²Ü ¸²î²ð²ÜÆ
Ü²Ê²¶²Ð **¶.Ð²ðàôÂÚàôÜÚ²Ü**

19 ³åñÇÉÇ 2016 Ãí³Ï³ÝÇ
êº²à-27